ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Շիրակամուտ համայնքի ավագանու հերթական նիստի վերաբերյալ

Համայնքը	**Միջոցառման անվանումը**	**Օրը**	**Ժամը**	**Անցկացման վայրը**
Շիրակամուտ	Ավագանու հերթական նիստ	26.02.2021թ.	15:00	**Շիրակամուտի** համայնքապետարանում (գ.Շիրակամուտ, Հայկական փողոց,շենք 2)

ՕՐԱԿԱՐԳ

2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-ԻՆ ԺԱՄԸ՝ 15:00-ԻՆ ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

1.ՀՀ լոռու մարզի Շիրակամուտ համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան և զարգացման ծրագրի իրականացման հաշվետվությունների մասին:

/Զեկ.Ա.Երանոսյան/

2.Շիրակամուտ համայնքի 2021թ.-ի տարեկան աշխատանքային պլանը/ՏԱՊ/ հաստատելու մասին:

/Զեկ.Ա.Երանոսյան/

3.Սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

/Զեկ.Ա.Երանոսյան/

ՆԱԽԱԳԻԾ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

_____

/Ձեկ.Ա.Երանոսյան/

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Շիրակամուտ համայնքի ավագանու 2021թ. փետրվարի 26-ի հերթական նիստի օրակարգը

ՕՐԱԿԱՐԳ

1.ՀՀ լոռու մարզի Շիրակամուտ համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան և զարգացման ծրագրի իրականացման հաշվետվությունների մասին:

2.Շիրակամուտ համայնքի 2021թ.-ի տարեկան աշխատանքային պլանը/ՏԱՊ/ հաստատելու մասին:

3.Սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

ՆԱԽԱԳԻԾ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

_____

/Զեկ.Ա.Երանոսյան/

Ղեկավարվելով ,Տեղական ինքնակառավարման մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, ,Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասով,

Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է.

- Հաստատել Շիրակամուտ համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի 1:
- Հաստատել 2020թվականի Շիրակամուտ համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի 2:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հավելված 1

Շիրակամուտ համայնքի ավագանու
,,26 '' փետրվարի 2021թ. թիվ 6-Ա որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 Թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Շիրակամուտ համայնքի 2020թ. Բյուջեն 4-րդ եռամսյակի կտրվածքով կատարվել է

ա/եկամուտների գծով 90.5 տոկոսով, նախատեսված 71220.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 64440.9 հազար դրամ:

Սեփական եկամուտները /հարկեր և տուրքեր, այլ եկամուտներ հիմնական միջոցների իրացումից/ նախատեսված 13164.0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 11496.9 հազար դրամ կամ բյուջեն սեփական եկամուտների գծով հատարվել է 87.3%-ով: Պաշտոնական դրամաշնորհների գծով /ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ/ նախատեսված 52944.0 հազար դրամի դիմաց պաստացի կազմել է 52944.0 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 100%:

բ/ Ծախսերի գծով կատարվել է 88.3%- ով նախատեսված 72763.3 հազար դրամի դիմաց դրամարկղային ծախսերը կազմել են 64249.1 հազար դրամ:

1.ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Վարչական բյուջեի եկամուտները 12 ամսվա համար նախատեսված 65508.0 հազար դրամի դիմաց կազմել են 62940.9 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 96.1 %:

1.1 Հողի հարկ

Հողի հարկի գծով 12 ամսվա համար նախատեսված 4354.6 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 2764.7 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 63.5%:

1.2. Գույքահարկ

Գույքահարկի գծով 12 ամսվա համար նախատեսված 4150.0 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 4329.6 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 104.3%:

1.3. Տեղական տուրքեր

Տեղական տուրքերի գծով 12 ամսվա համար նախատեսված 380.0 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 377.4 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 99.3%:

1.4. Այլ եկամուտներ

Այլ եկամուտների գծով 12 ամսվա համար նախատեսված 3679.4 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 2524.6 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 68.6 %:

Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացում կատարվել է 2884.1 հազար դրամ, նախատեսված է եղել 5093.4 հազար դրամ, որը կազմում է 56.6%:

2. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ

Վարչական բյուջեի ծախսերը 12 ամսվա համար նախատեսված 65508.0 հազար դրամի դիմաց կատարվել է 61756.0 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 94.3%:

Ըստ գործառնական դասակարգման և ծրագրերի ծախսերը կատարվել են հետևյալ կերպ՝

ա/ Ապարատի պահպանման ծախսեր 96.5%,

բ/Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ 92.3%,

գ/Տնտեսական հարաբերությունների գծով՝ 87.6%,

դ/Շրջակա միջավայրի պահպանություն ՝ 93.1%,

ե/կոմունալ տնտեսություն՝ 95.4%,

զ/ Հանգիստ, մշակույթի գծով՝ 100%,

է/Կրթություն՝ 99.6%,

ը/Սոցիալական պաշտպանություն՝ 100%,

թ/Պահուստային ֆոնդ՝ 100%:

3. ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ

Ֆոնդային բյուջեով 12ամսվա համար նախատեսված ծախսերը կատարվելեն 43.6 % - ով:

Տնտեսական հարաբերություններով մուտքագրվել է 1853.0 հազար դրամ:

Հավելված 2

Շիրակամուտ համայնքի ավագանու
,,26 ’’ փետրվարի 2021թ. , թիվ 6-Ա որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2020Թ.ԸՆԹԱՑՔՈՒՄ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Շիրակամուտ համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը մշակվել է հիմք ընդունելով համայնքի ֆինանսական կարողությունները, համայնքի հիմնախնդիրների առաջնահերթությունը և այլ չափանիշներ

Հնգամյա ծրագրի շրջանակներում 2020թվականին համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները

1. Շիրակամուտ համայնքում սուբվենցիոն ծրագրի շրջանակներում իրականացվել է Արևային ֆոտովոլտային կայանի և Վանաձոր-Գյումրի ավտոմայրուղու Շիրակամուտ համայնքի տարածքով անցնող հատվածի գիշերային լուսավորության ցանցի կառուցում: Այս աշխատանքների համար ծախսվել է 8520,0 հազար դրամ ,որից 5112,0հազար դրամը հատկացվել է պետ.բյուջից, իսկ 3408,0հազար դրամը համայնքի կողմից կատարված ներդրումն է:

2. Կառուցվել է խմելու ջրի 350մ երկարությամբ նոր ջրագիծ, որի շնորհիվ խմելու ջրի քանակը ավելացել է 2,5-3 լ ջրով:

3.ՀՀ Ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից կառուցվել է արհեստական խոտածածկով ֆուտբոլի դաշտ:Աշխատանքների համար ծախսվել է 15,0մլն դրամ,որից համայնքի կողմից ներդրումը կազմում է3,0մլն դրամ:

4.Բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները բարելավելու համար ձեռք է բերվել շուրջ 60 տոննա պարարտանյութ , դրանով նպաստելով գյուղմթերքների արտադրության ավելացմանը:

4.Կատարվել է ներհամայնքային վթարված ջրագծերի վերանորոգման աշխատանքներ և ընդհանուր ծախսը կազմել է 400,0 հազար դրամ

5.Դեպի անասնագոմեր տանող ճանապարհների վերանորոգման համար ծախսվել է 250,0հազար դրամ:

ՆԱԽԱԳԻԾ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021թ. ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՄԱՍԻՆ

_____-__

/ Զեկ. Ա.Երանոսյան/

,,Տեղական ինքնակառավարման մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ և հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության ներկայացրած համայնքների տարեկան աշխատանքային պլանների մշակման մեթոդական ուղեցույցը՝

Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Շիրակամուտ համայնքի 2021թ. տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի

ՆԱԽԱԳԻԾ

ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ Ձեկ. Ա.Երանոսյան/

,,Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 17-ի ,Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասինե թիվ 16-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով Շիրակամուտ համայնքի բնակիչների դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է.

Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և

1.Շիրակամուտ համայնքի 2021թ. բյուջեի 10.7.1 դասակարգման 4729 հոդվածից Տելման Մկրտչի Երանոսյանին հատկացնել դրամական օգնություն 30000/երեսուն հազար/ դրամ /համաձայն հավելվածի/:

2. Շիրակամուտ համայնքի բյուջեի 09.4.1 դասակարգման 4729 հոդվածից՝ ,,Բարձրագույն մասնագիտական կրթություն", 2020-2021թ.թ. ուս. տարվա 2-րդ կիսամյակի ուսման վարձ՝ 50000/հիսուն հազար/ դրամ փոխանցել ,,Վանաձորի Հովի.Թումանյանի անվան պետական համալսարան" հիմնադրամ, Էմմա Ստեփանի Երանոսյանի համար/համաձայն հավելվածի/:

3.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարը տրամադրել բնակիչներին:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի ավագանու

2021 թվականի փետրվարի **26–ի N8-Ա որոշման**

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Երանոսյան Թելման Մկրտչի - երեսուն հազար դրամ, / սոց. օգնություն/.
2. Երանոսյան Էմմա Ստեփանի - հիսուն հազար դրամ, /ուսման վարձ/.

ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ. ԵՐԱՆՈՍՅԱՆ